

**Սեպտեմբերի 27-ի առավոտյան Ադրբեջանը՝ թուրքական ուժերի եւ վարձկան ահաբեկիչների օժանդակությամբ, պատերազմ է սկսել Հայոց դեմ՝ արցախաադրբեջանական շփման գծի ամբողջ երկարությամբ՝ արգելված զինատեսակների կիրառմամբ թիրախավորելով նաեւ քաղաքացիական բնակչությանը: Հայաստանում եւ Արցախում սեպտեմբերի 27-ին հայտարարվել է ռազմական դրություն:**

Չորեքշաբթի  
7 հոկտեմբերի 2020թ.  
№ 21 (537)

ՀԻՆԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ՀՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 285) 5 25 63  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468  
2021  
9 771829 346006

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Երբ հայերը կանգնում են ուս-ուսի տված եւ ձեռք-ձեռքի բռնած՝ հողը ոտքի տակ տալով իրենց թմբուկների եւ ծիրանափողի ձայնի ներքո, ավելի շուտ իմ պալատի սյուները փոշի կդառնան, քան նրանց հնարավոր կլինի կանգնեցնել:**

ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ



## Հայոց բանակի հիմնը

Երազի իմ երկիր հայրենի, Հոգսերդ շատ, հույսդ մեծ, Քաղաքորոտ երկիր:

Ես մի բուռն եմ քո հողի, Ես մի ծիլն եմ քո արտի, Ես մի թերթն եմ քո ծաղկի, Հայրենի երկիր, Հայաստան:

Երազի իմ երկիր հայրենի, Հոգսերդ շատ, հույսդ մեծ, Արծվաբուն երկիր:

Իմ պապերն են քեզ շահել, Իմ եղբայրքն են քեզ պահել, Քոնն են որդիքն իմ ջահել, Հայրենի երկիր, Հայաստան:

## Պատերազմ է՝ Հայրենական, Սրբազան, կենսաց ու մահու...

«Ս եկնում եմ առաջնագիծ՝ իմ բաժին մարտը մղելու», – հայտարարել է Արցախի նահապետ Արայիկ Հարությունյանը: Նա նշել է, որ Արցախի եւ Ադրբեջանի շփման գծի ամբողջ երկայնքով տարբեր ինտենսիվությամբ ընթանում են ծանր մարտեր: «Հրետակոծության են ենթարկվել քաղաքացիական բնակավայրերը, ներառյալ՝ մայրաքաղաք Ստեփանակերտը: Ազգն ու Հայրենիքը վտանգված են. վտանգված է մեր քաջ հայորդիների արյան գնով

ազատագրված սեփական հողի վրա ազատ, անկախ ու արժանապատիվ կերպով ապրելու եւ արարելու իրավունքը: Ուստի, հատուկ նշանակության ստորաբաժանումների հետ այժմ մեկնում եմ առաջնագիծ՝ իմ բաժին մարտը մղելու, քանզի ես արդեն առաջնագծում ավելի արժեքավոր կլինեմ, քան թիկունքում», – իր տարածած հայտարարությունում նշել է Արցախի նահապետը: Հարությունյանը կոչ է արել բոլորին՝ «անհապաղ ոտքի կանգնել եւ անմնացորդ կվի-

րումով պաշտպանել սեփական հայրենիքում առանց գոյաբանական վտանգի ապրելու մեր անբախտելի իրավունքը»: «Սա հայրենական սուրբ պատերազմ է, որը մենք պետք է հաղթենք յուրաքանչյուրի առավելագույն մասնակցությամբ ու նվիրումով: Ես հավատում եմ ձեր ոգու արիությանը եւ բազկի ուժին: Լինենք արժանի մեր Մեծ Նախնիներին, բոլոր նրանց, ովքեր դարձրել ենք առաջ, Սարդարապատում, Մեծ հայրենականում, Արցախյան **Շարունակությունը՝ էջ 3**

## ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

«Ո՛չ, ախորձ, ուր անասունները կուտեն եւ կը պառկեն՝ հայրենիք չէ»:  
**ԼԱՄՇԵ**

Հայրենասիրություն - մարդկային առաքինությունների թագն ու պսակն է դա: Մարդկային բարոյական յատկությունները իր մեջ միացնող այդ գերագույն առաքինությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը եւ անսպառ աղբիւրը նրանց ոյժի եւ մեծութեան: Նա այնքան ջերմ է մի ժողովրդի մեջ, որքան փոքր է այդ ժողովուրդը

եւ որքան ամբարիշտ են նրա հարեանները: Եթե այդպես չէ ամենուրեք, այդպես պիտ լինի: Այդ նւիրական զգացումը զարգանում է աստիճանաբար: Սկզբում՝ բնազդական, զարգանալով՝ նա դառնում է իմացական՝ ոգիանում է նա: Առաջին դեպքում անհատը թելադրում է, մղում մի բնազդային զգացումից, երկրորդ դեպքում՝ նա գիտակցորեն կատարում է մի պարտականություն: Նա զարգանում է ժողովուրդների ինքնագիտակցութեան եւ արժանապատության



զգացումի հետ, ընկնում՝ նրանց նիւթակրօսութեան, շռայլութեան, սեղմ ասած՝ նրանց բարբերի ապականութեան հետ, մեծապես արագացնելով նրանց անկումը: Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, ընկնում՝ նրանց պակասի պատճառով: \* \* \* Մեր ժողովուրդն առանց հայրենասիրութեան այն է, ինչ որ մի մարմին՝ առանց հոգու: Դա մայրն է - իր նման փրկարար - մի շարք առաքինությունների՝ գաղափարականության, անձնկրթութեան, արիության: Դա պատերազմողի բարոյական ամրու-

թիւնն է, կախարդական զրահը, անվրեպ զէնքը: Հայրենասիրութեամբ հարուստ ժողովուրդը դեպքերի խաղալիք չէ, այլ՝ նրանց հրամայողը: Այդպիսին սովորական «նաաբեկություններ»-ի ժամանակ չի զինաթափում բարոյապետ: Վստահ իր բարոյական ոյժերին, նա շատ շուտ է ուղղում իր մեջքը՝ վերագրաւում իր նախկին դիրքերը, դրուօթիւնը: Հայրենասիրութեան հետ բարձրանում են ազգերը, ընկնում՝ նրա հետ: Փոքր ազգերը պարտադրօրեն անելի հայրենասեր պիտ լինեն, քան մեծերը, մենք՝ անելի քան բոլորը: Հայրենապաշտ պիտի լինենք մենք: **ԳԱՐԵԳԻՆ ՆԺՆԵՅ**

# Ի զեն՝ հանուն Հայրենիքի ու արժանապատվության. Արցախի կայծակնային բռնազավթման ադրբեջանաթուրքական մտահղացումը տապալվեց



## Պատերազմ է՝ Հայրենական, Սրբազան, կենաց ու մահու...

Սկիզբը՝ էջ 1

ազատամարտում, 2016 թվականի ապրիլյան պատերազմում, 2020 թվականի հուլիսյան մարտերում իրենց կյանքն են զոհաբերել, որպեսզի մեր մայրերի, քույրերի, զավակների յուրաքանչյուր առավոտ խաղաղությամբ բացվի, որպեսզի նրանց յուրաքանչյուր ժպիտ արժանապատվությամբ ու հպարտությամբ լցվի:

Կինեք պատասխանատու մեր ներկա ու գալիք սերունդների առջեւ, որպեսզի թույլ չտանք դարավոր թշնամուն կրկին ցեղասպանել մեզ եւ յաթաղան ճոճել մեր գոյության ու արժանապատվության գլխին, որպեսզի հնարավորություն ու իրավունք ընձեռենք մեր գալիք սերունդներին՝ լինելու եւ արարելու հավետ սեփական հողի վրա ու սեփական արժեքներով:


Մենք բազում հաղթանակներ ենք տարել եւ ստեղծել ենք կազմակերպված ու մարտունակ, տարածաշրջանում հզոր ու հաղթանակած բանակ: Հայոց բանակն այսօր ազգային միասնականության եւ համախմբման կենդանի մարմնացումն ու առանցքն է: Այժմ կրկին ժամն է ազգովի դառնալու մի կուռ ու հուժկու բանակ, մի ոգեղեն հայրենական պարիսպ, որին կբախվեն բոլոր օտար մրիկներն ու հետ կչարտվեն գլխակորույս կերպով:

Վտահ եմ, որ դուք էլ եք կիսում իմ մտահոգություններն ու համոզմունքները, որ դուք էլ եք դավանում այն համազգային ու համամարդկային արժեքները, հանուն որոնց պետք է կանգնենք անկոտրում ու անվարան կերպով:

Սա մեր վերջին մարտն է, որը մենք անպայման միասին հաղթելու ենք», - ասված է Արցախի Նախագահի հայտարարությունում:

03.10.2020

## Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի կոչը



Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը հոկտեմբերի 3-ին հանդես է եկել համայն հայությանն ուղղված ուղերձով.

«Իմ շատ սիրելի հայրենակիցներ, դիմում եմ ողջ, ողջ հայությանը՝ համախմբվել եւ զորակից դառնալ Արցախին եւ մեր բանակին:

Մի քիչ առաջ Արցախի Նախագահ պարոն Արայիկ

Հարությունյանը մեկնեց առաջնագիծ՝ ղեկավարելու, գոտեակղելու մեր հայրենյաց պաշտպաններին: Այսօր իրոք թեժ ու դաժան պատերազմ է զնում, կենաց-մահու պատերազմ, գոյապայքարի կռիվ է: Դուք գիտեք, որ մենք երբեք պատերազմ չենք սկսել, երբեք զինադադարը չենք խախտել, բայց ամեն անգամ մեր դեմ նենգաբար սկսում են պատերազմել:

Ամեն մի մարդու, ամեն մի ժողովրդի իրավունքն է իր կյանքը պաշտպանելու, պաշտպանվելու: Այսօր մենք ստիպված ենք մեր գոյապայքարը, մարտը տալ հանուն կյանքի եւ հանուն խաղաղության:

Ես հիմա կամենում եմ, որ բոլորը խորունկ հավատով, արիական ոգով դառնաք մեկ բռունցք, մեկ միտք, մեկ կամք եւ ամեն ինչով աջակցել մեր բանակին ու արցախահայրությանը:

Մենք այստեղ ենք եւ գիտենք, որ մեջքի հետեւում Մայր Հայաստանն է: Մենք Մասիս սարի պես պետք է լինենք կայուն ու անսասան:

Այսօր ժամը 18.00-ին խնդրում եմ աշխարհի բոլոր հայերին միասնական աղոթքով միանալ ի զորակցություն մեր բանակի: Եվ մենք բոլորս աղոթում ենք մեր հաջողության, հաղթանակի եւ խաղաղության համար: Այնպես որ բոլորիս աղոթքն ենք սպասում եւ բոլորիդ զորակցությունը:

Ամուր եղեք, պինդ եղեք, մեր գործն արդար է, եւ Աստված միշտ արդարների կողմն է լինում: Տերը օրհնյալ պահի ամբողջ հայությունը եւ մեր բանակը: Ամեն: //

## Արայիկ Հարությունյան հրաշալի առաջնորդի խոսքը՝ հույսի, ոգեշնչման եւ հաղթանակի անսպառ ակունք



### Սիրելի հայրենակիցներ

Այսօր՝ վաղ առավոտյան, շփման գծի ողջ երկայնքով թշնամին սկսել է ակտիվ օդային, հրթիռահրետանային եւ ցամաքային հարձակում թիրախավորելով Նաեւ խաղաղ բնակավայրերը: Բնակչությանը կոչ եմ անում պատսպարվել, ցուցաբերել հանգստություն:

Քիչ առաջ հանդիպել եմ մեր առաջին կամավորականներին: Հավաստիացնում եմ մեր զինված ուժերն իրենց դիրքերում ամուր են, իսկ պատասխանը լինելու է անհամաչափ ու խիստ: Իրավիճակի ողջ

պատասխանատվությունը կրում է Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը եւ յուրաքանչյուր կորստի համար պատասխան են տալու:

Սա կենաց մահու կռիվ է, որն ընդունում ենք ազգովի եւ ազգովի հաղթանակ ենք տանելու:

Ի զեն՝ հանուն Հայրենիքի ու արժանապատվության:

Ամուր եղեք, սիրելիներս:

27.09.2020

// Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Ազգային ժողովի արտահերթ նիստ է հրավիրվել: Հանդես գալով պատգամավորների առջեւ՝ հայտարարել եմ ռազմական դրություն եւ համատարած զորահավաք տասնուչորս բարձր տարիքային խմբի համար:

Մենք բազմիցս հայտարարել ենք, որ պատերազմի կողմնակից չենք, բայց պատրաստ ենք պատերազմի:

Մեզանից ավելի շատ խաղաղություն սիրող ու խաղաղության կողմնակից չկա:

Մենք չենք ցանկացել պատերազմ, այս պատերազմը մեզ պարտադրվել է, եւ պարտավոր ենք պաշտպանել մեր հայրենիքն ու



# Արցախի ծաղկուն քաղաքները՝ ադրբեջանաթուրքական հրոսակների թիրախ

Ղևտանիքները:

27.09.2020

Արդեն երկրորդ օրն է՝ շարունակում ենք ինտենսիվ կերպով գտնվել Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության սանձազերծած պատերազմական լայնամասշտաբ գործողությունների մեջ: Գիշերվա ընթացքում Պաշտպանության բանակն իրականացրել է մի քանի փայլուն ռազմագործողություններ՝ պաշտպանական բնագծի տարբեր հատվածներում վերականգնելով կորցրած դիրքերը կամ ունեցել որոշակի առաջխաղացում:

Հպարտ եւ շնորհակալ եմ մեր զորքին, հրամանատարությանը՝ ցուցաբերվող մարտական բարձր ոգու եւ պատրաստականության համար:

Հպարտ եւ շնորհակալ եմ մեր ժողովրդին՝ այս ընթացքում ցուցաբերած ողջախոհության, ամեն ինչ հանուն Հայրենիքի ու ճակատի՝ նվիրվածության համար:

Հպարտ եւ շնորհակալ եմ ՀՀ մեր հայրենակիցներին ու իշխանություններին՝ ցուցաբերած անվերապահ սատարման համար:

Հպարտ եւ շնորհակալ եմ աշխարհասփյուռ մեր հայրենակիցներից աջակցող հազարավոր զանգերի ու խոսքերի համար:

Խոնարհումս ու ցավակցություններս եմ հայտնում այս ընթացքում հերոսի մահով ընկած մեր բոլոր տղաների հարազատներին: Հպարտ եւ շնորհակալ եմ:

Մեկ անգամ ես դիմում եմ բոլորիդ՝ հաղթանակի անվերապահ հավատով ու զգացումով: Անհնար է հաղթել մի ժողովրդի, որը ժամերի ընթացքում վերածվում է կուռ ու միասնական բանակի:

Հաղթանակը մերն է լինելու:

28.09.2020

Այսօր խորհրդակցություն ենք անցկացրել Պաշտպանության բանակի ձեւավորման ու կայացման ակունքներում կանգնած բարձրաստիճան Նախկին հրամանատարների մասնակցությամբ:

Այս օրհասական պահին նրանք իրենց

միասնակցությամբ ու Պաշտպանության բանակի հրամկազմին եւ հրամանատար Ջալալ Հարությունյանին լիովին աջակցելու պատրաստակամությամբ բացառիկ օրինակ են ցուցադրում աշխարհին, որ հայն անկարտելի է, որ հայ ժողովուրդը կարող է միայն հպարտանալ իր հերոս զավակներով:

Կեցցե՛ մեր միասնությունը:

Կեցցե՛ նաև մեր ժողովրդի հերոսական զավակները:

29.09.2020

Հայաստանի եզրիական համայնքը միշտ գործուն աջակցություն է ցուցաբերել Արցախի ժողովրդին՝ իր արդարացի պայքարը մղելու ճանապարհին: Այս անգամ ես այն չուշացավ: Շնորհակալ եմ:

01.10.2020

Քիչ առաջ վերադարձա առաջնագծից: Եղել եմ տարբեր հատվածներում. ամենուրեք առկա է ոգեւորություն, սխրանք, հերոսություն: Մեր հաղթանակն անկասելի է, քանի որ մեր պաշտպանների ցուցադրած վարքը հայ ժողովրդի հավաքական ուժի եւ հարատեւության բացառիկ դրսեւորում է:

Ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել Պաշտպանության բանակին եւ նրա հրամկազմին՝ իրենց առջեւ դրված խնդիրը փայլուն կատարելու համար:

04.10.2020

Սիրելի թախչ եւ լեզգի եղբայրներ ու քույրեր, մենք ուշադիր հետեւում ենք Ադրբեջանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումներին, մասնավորապես՝ Ադրբեջանի թախչաբնակ եւ լեզգիաբնակ քաղաքներում ու գյուղերում օրըստօրե աճող բողոքին, որոնցով բնակչությունը բոլորում է բանակ զորակոչվելու եւ Արցախի ու Հայաստանի դեմ պատերազմելու Ալիեւի հրամանը: Բողոքի ցույցերի համար առիթ են դարձել թախչ եւ լեզգի հարյուրավոր զոհերի առկայությունը: Նրանց որպես

կենդանի թիրախ օգտագործելու եւ այդ գործելակերպով նրանցից ազատվելու ադրբեջանական քաղաքական կլանի գործելակերպը տասնամյակների ընթացքում փոփոխություն չի կրել:

Արցախը կարելու է Ադրբեջանի բնիկ ժողովուրդների՝ թախչների եւ լեզգիների՝ Արցախյան հիմնախնդրին խորապես տիրապետելու, ինչպես նաեւ համակրանք ունենալու մշտական դրսեւորումները:

Ուզում եմ հավաստիացնել, որ մենք թախչ եւ լեզգի ժողովուրդների արդարացի պայքարի կողքին ենք եւ պատրաստ ենք բոլոր հնարավոր միջոցներով նպաստել ձեր պայքարի վերջնական պատակին՝ անկախության ձեռքբերմանը: Պաշտպանության բանակը, ի նշան մեր բարի կամքի, չի թիրախավորելու թշնամու այն ռազմական օբյեկտները, որոնք տեղակայված են թախչստանում եւ Լեզգիստանում:

04.10.2020

Չնայած բազմաթիվ Նախագրուշացումներին՝ Ադրբեջանի ահաբեկչական բանակը շարունակում է թիրախավորել Ստեփանակերտի խաղաղ բնակչությանը՝ օգտագործելով «Պոլոնեզ» եւ «Սմերչ» համակարգեր:

Ադրբեջանի խոշոր քաղաքներում մշտական տեղակայված զինվորական օբյեկտներն այսուհետ դարձան պաշտպանության բանակի թիրախները: Ադրբեջանի բնակչությանը կոչ եմ անում արագ լքել այդ քաղաքները՝ հնարավոր կորուստներից խուսափելու համար:

Այս ամենի ամբողջ պատասխանատվությունը կրում է Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարությունը:

04.10.2020

Պաշտպանության բանակը շարունակում է փայլուն եւ արհեստավարժ կերպով կատարել իր առջեւ դրված մարտական խնդիրը: Պատերազմական իրավիճակին հատուկ պայմաններում արդյունավետ են գոր-

ծում նաեւ պետական կառավարման բոլոր օղակները: Թե՛ թիկունքում, թե՛ առաջնագծում բոլորը բաշ զիտակցում են իրենց անելիքները:

Ամեն ինչ գտնվում է իմ անմիջական ու լիարժեք վերահսկողության ու համակարգման ներքո:

Հաղթանակը մերն է լինելու, վստահ եղեք:

06.10.2020

Ադրբեջանի սանձազերծած պատերազմական հերթական օրն ամփոփում ենք առաջնագծում ունեցած կայուն հաջողությամբ: Պաշտպանության բանակն իր առջեւ դրված մարտական խնդիրն իրականացրել է փայլուն, եւ այս պահին ես հաջողությամբ դիմագրավում է թշնամու բոլոր ոտնձգություններին թե՛ օդում, թե՛ ցամաքում՝ պատճառելով նրան զինտեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի կորուստներ: Թերեւս դա է եղել պատճառը, որ Ադրբեջանի ահաբեկչական բանակը միայն «Սմերչ» կայանքից ավելի քան հարյուր հրթիռ է արձակել մայրաքաղաք Ստեփանակերտի ուղղությամբ, սակայն, բարեբախտաբար, մեծ կորուստներ չեն եղել:

Այսօր ինձ զեկուցեցին նաեւ, որ այս մի քանի օրվա մեջ սփյուռքահայության հանգանակությունն արդեն կազմել է 50 մլն եվրո: Շնորհակալ եմ բոլորին՝ ցուցաբերվող աջակցության համար եւ հորդորս է շարունակել դրամահավաքը, քանի որ պատերազմից ու, ամենակարեւորը, սպասվող առաջիկա հաղթանակից հետո պետք է արագ կերպով վերականգնել ավերակները եւ շարունակենք ծաղկեցնել համայն հայության հպարտությունն իր մեջ մարմնավորած Արցախ աշխարհը: Ու դա պետք է լինի մեր բոլորի հավաքական պատասխանն աշխարհին:

Մեր համազգային միասնությունը մեկ անգամ ես փաստում է, որ Ադրբեջանն արդեն պարտվել է այս պատերազմում: Հաղթանակը մերն է, ու թող դրանում ոչ ոք չկասկածի:

06.10.2020



# Սյունիքը՝ զորագունդ դարձած, մեկնեց Արցախ (02.10.2020թ.)

Արցախյան բազմադարյա կռվի նոր փուլ է սկսվել:

Պատերազմի գույժը լսելուց անմիջապես հետո ոտքի է ելել նաև ԵԿՄ Սյունիքյան զորագունդը:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան ԵԿՄ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ,

զնդապետ Մելիքսեթ Պողոսյանը մարտական պատրաստության հրաման էր տվել Գորիսի, Կապանի, Սիսիանի, Մեղրու եւ Քաջարանի ջոկատներին:

Ժամեր անց բոլոր ջոկատների հրամանատարները զեկուցեցին պատրաստ լինելու մասին:

Սակայն Սյունիքյան զորագունդը ճակատ մեկնելու թույլտվություն ստացավ միայն հոկտեմբերի 2-ին:

Այդ օրվա երկրորդ կեսին մարզի երկրապահները հավաքվել էին Գորիսի Սուրբ Գրիգոր Տաթևացու անունը կրող հրապարակում:

Պատերազմին մասնակցելու համար ելել էին Արցախյան առաջին պատերազմի վետերաններ, 2016 թ. ապրիլյան պատերազմի մասնակիցներ, նաև երիտասարդներ ու կանայք:

Հորդառատ անձրեւի պատճառով, սակայն, կամավորականների գունդը տեղափոխվեց Գորիսի պետական դրամատիկական թատրոնի դահլիճ:

Ռազմաճակատ մեկնող սյունեցիների առջև ելույթ ունեցավ զնդապետ Մելիքսեթ Պողոսյանը:

Օրհնության խոսքով հանդես եկավ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը:

Մտտ մեկ ժամ անց կամավորականները Մելիքսեթ Պողոսյանի հրամանատարությամբ բռնեցին Արցախի ճանապարհը:

Ուշագրավ էին բոլորի ոգետությունն ու վճռականությունը:

**Միայն հաղթանակ.** ողջերթի այսպիսի խոսքով էին կամավորականների մերձավորներն ու հարազատները ճանապարհում մարտադաշտ մեկնող զորագնդին: **##**



# «Սիսական» փառապանծ ջոկատը մեկնեց Կրակագիծ

Արցախյան գոյամարտում, նաև 2016-ի բառօրյա պատերազմում մարտական սիրանքների ճանապարհով անցած «Սիսական» ջոկատը սեպտեմբերի 28-ին, մեկնեց Արցախ:

Սիսիանում նրանց ողջերթի խոսք հղեց

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը:

Իսկ Գորիսի արեւմտյան մուտքի մոտ (Գորիս-Ստեփանակերտ մայրուղու վրա) «Սիսական» ջոկատին բարեմաղթանքի խոսք հղեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր

Սամվել Ալեքսանյանը:

Ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը «Սյունյաց երկիր» հետ զրույցում ասաց. «Մեր այցը համաձայնեցված է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի ղեկավարության հետ: Գնում ենք

*Ստեփանակերտ, այնտեղ էլ զենք կստանանք ու կորոշվի, թե առաջնագծի որ հատվածն ենք մեկնում:*

*84 հոգանոց ջոկատի հագուստի հայթայթման գործում մեզ աջակցեց Նաիրի Բախշյանը: Սիսիանում, զուգահեռաբար, պատրաստվում է մեր ջոկատի երկրորդ հերթափոխը, որն ավելի մեծաթիվ է լինելու, քանզի ցանկացողները շատ են»:*

Ջոկատի մեջ մտնում են Արցախյան հերոսամարտի վետերաններ, 2016 թ. բառօրյա պատերազմի մասնակիցներ, նաև երիտասարդներ, ովքեր տարբեր պատճառներով դեռևս չեն ծառայել հայոց բանակում:

Աշոտ Մինասյանն ասաց նաև, որ «Սիսական» ջոկատը ԵԿՄ-ի կամ այլ կազմավորման մեջ չի մտնում եւ ճակատ է մեկնում հայրենիքի կանչով ու սեփական նախաձեռնությամբ:

*– Ես իմ ազգի զինվորն եմ եւ պարտավոր եմ մեր ժողովրդի համար դժվարին այս ժամին լինել առաջնագծում, – իր խոսքն այսպես ամփոփեց Աշոտ Երկաթ հորջորջումով Աշոտ Մինասյան լեգենդար հրամանատարը: **##***



### Վիրավոր զինվորները Գորիսի բժշկական կենտրոնում արժանանում են լիակատար սիրո և հոգատարության

Մարզի բնակիչներին հուզում է հետաքրքրում է մարտի դաշտից «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն տեղափոխված՝ պատերազմող Յայոց բանակի վիրավորների առողջական վիճակը և այն, թե ինչպե՞ս ու ինչպիսի՞ օգնություն կարող են ցուցաբերել նրանց՝ այդպիսով արտահայտելով վիրավոր զինվորների ու կամավորականների հանդեպ իրենց մեծ սերն ու երախտիքը:

Հայտնենք, որ ռազմական դրության սահմանափակումներով պայմանավորված՝ մանրամասն տեղեկություն չենք կարող հաղորդել:

Թերեւս, միայն՝ ի պատիվ Գորիսի բուժանձնակազմի, կարող ենք ուրախությամբ տեղեկացնել, որ պատերազմի առաջին օրից մինչ այս պահը, բարաբար բժշկական կենտրոնում ոչ մի վիրավոր զինվորի մահ չի գրանցվել:

Նրանք գտնվում են բժշկական հմուտ կադրերով, արդիական սարքավորումներով ու բավարար դեղորայքով հագեցած, ռազմական կարգապահությամբ գործող հիվանդանոցում՝ բուժանձնակազմի շուրջօրյա ուշադրության ներքո, շրջապատված բժիշկ բուժքույրերի լիակատար սիրով ու հոգատարությամբ:

Վստահենք մեր բուժանձնակազմին, նրանցից յուրաքանչյուրն անօրինակ ջանքեր է գործադրում ոչ միայն փրկելու մեր զինվորների կյանքը, նաեւ՝ լիարժեք առողջություն պարգևատրելու, որպեսզի առաջին իսկ



հնարավորության դեպքում՝ նորից մարտադաշտ մեկնեն:

Իսկ մեր վիրավորները բոլորն են շտապում առողջանալ և վերադառնալ մարտա-

դաշտ՝ պատերազմը հասցնել հաղթական ավարտին:

Առողջություն նրանց: **ՍՈՒՍԱՆԱ ԲԱԲԱՏԱՆՅԱՆ, 01.10.2020Թ.**

### Դրամահավաք՝ հանուն ամուր թիկունքի. Սյունիքը նաեւ այս ճակատում է

Պատերազմական այս շրջանում հայ գործարարները գումարներ են փոխանցում բանակին: Գործարար Մաքսիկ Հակոբյանի որդիները՝ Արման և Վահե Հակոբյանները, 50 մլն դրամ են փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրակին՝ սահմանների, բանակի համար:



### Աշոտ Մինասյան հրամանատարի ծննդյան օրն է. շնորհավորում ենք

Այսօր «Սիսական» փառապանծ ջոկատի հրամանատար Աշոտ Երկաթի՝ Աշոտ Մինասյանի ծննդյան օրն է:

Սեպտեմբերյան պատերազմի երկրորդ օրվանից՝ 2020 թ. սեպտեմբերի 28-ից, «Սիսական» ջոկատը Աշոտ Մինասյանի հրամանատարությամբ Արցախյան ռազմաճակատում է: Եվ ուրեմն՝ նրան հանդիպելու և ձեռքսեղմումի հնարավորություն չունենք, ինչի համար էլ սույն ուղերձն ենք հղում:

#### Հարգելի Աշոտ Հրամանատար, հարգելի հրամանատար և բարեկամ

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է Ձեզ՝ ծննդյան 61-րդ տարեդարձի կապակցությամբ: Մենք Ձեզ տեսանք Արցախյան առաջին պատերազմում՝ ծաղկափոխ Աղվան եղբոր հետ, ով, սակայն, մարտիրոսվեց այդ հերոսամարտում:

Ձեզ տեսանք 2016-ի ապրիլյան պատերազմում՝ Մատաղիտում՝ որդիներից հետ, իսկ հետո՝ Թալիշում, երբ հավերժացան էիր այդ պատերազմում՝ նահատակված զինակիցներից հիշատակը:

Ձեզ ռազմաճակատ ճանապարհեցիք նաեւ այս անգամ, երբ պատերազմ հայտարարվեց Յայոց տան դեմ, որը կարող է եւ ճակատագրական հետեւանքներ ունենալ:

Ուրախ ենք, որ Սյունյաց աշխարհը Ձեզ նման քաջարի զինվոր է բազմահմուտ հրամանատար ունի, ում հավատում են ում հետեւում են հարյուրավոր քաջեր Սիսիանից (եւ ոչ միայն):

Անշուշտ, Ձեզ քաջառողջություն ենք ցանկանում նախ և առաջ ու հպարտ ներկայություն՝ սյունիքյան մերօրյա ընթացքում: Բայց ունենք մեկ այլ մտաբանություն՝ հարգանքն ու միայն հաղթանակ մեր ժողովրդին...

Տարիների Ձեր վարքը այսօր էլ հուշում է զգուշացնում է՝ մենք նահանջելու տեղ չունենք այլեւս, մենք պարտավոր ենք հակառակորդին զինադադար պարտադրել, բանակի ինչպես դարերի փորձն է ցուցանում, թուրքն ուրիշ լեզու չի հասկանում:

Թող ջոկատիդ խիզախ տղաներից եւ ընդհանրապես մարտադաշտում գտնվող քաջարի հայորդիներից եւ ոչ մեկի մատը փուշ չմտնի, ու յուրաքանչյուրը հայրենի օջախ վերադառնա ողջ և առողջ:

Աստված պահապան Ձեզ ու բոլոր հայ մարտիկներին, ովքեր անմասցորդ նվիրումով տեր են կանգնել Յայոց արժանապատվության ու հող հայրենիքին:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», 02.10.2020Թ.

## Սյունիքում նաեւ համընդհանուր զորահավաք է

Սեպտեմբերի 28-ին հանրապետությունում հայտարարված համընդհանուր զորահավաքի շրջանակներում 33 զինված ուժեր զորակոչվեց նաեւ Գորիսի պետական քոլեջի տնօրեն, Գորիս համայնքի ավագանու անդամ Կարեն Լազարյանը:

N զորամասի տարածքում, որտեղ հավաքվում էին զորակոչվածները, Կարեն Լազարյանին ողջերթի խոսք հղեցին ԵՎՄ Սյունիքի խորհրդի նախագահ, գեղապետ Մելիքեթ Պողոսյանը, Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, գեղապետ Արմեն Թումանյանը, Վարուժան Ալեքսանյանը, ուրիշներ:

Հիմնական տեղաբաշխման վայր մեկնելուց առաջ Կարեն Լազարյանը մասնավորապես ասաց. «Շարունակվող Արցախյան գոյամարտի այս փուլի պատասխանատուն մեր սերունդն է, մենք պետք է պաշտպանենք հայոց անկախությունն ու ազատությունը, հայոց արժանապատվությունը:

Եվ մենք դա անելու ենք անմասցորդ նվիրումով ու անպայման հաղթելու ենք...

Մի քիչ հապճեպ ստացվեց ինձ կանչելն ու տանելը, ուստի եւ չկարողացա պատշաճ ձևով հրաժեշտ տալ քոլեջի դասախոսական եւ ուսանողական կոլեկտիվներին: Հիմա եմ նրանց խոսք, ավելի ճիշտ՝ խնդրանք ուղղում պատերազմի եւ համաճարակի մեր օրերում առավելագույնն արեք, որպեսզի քոլեջի առօրյան եւ հատկապես դասախոսները չհասթարվի, դրանով դուք ձեր բաժին ավանդը կրեք եւ մեր հաղթանակի գործում:

Իսկ ես գնում եմ պարտքի գիտակցումով: Հիմա մեր տեղը ճակատում է, կարիներտներից, տաբուկ անկյուններից հայրենասիրություն բարոզելն այլեւս ամոթ է, առավել ամոթ է զորակոչից խուսափելը եւ թամաշավորի կեցվածք ընդունելը: Մինչեւ նոր հանդիպում...»:



տում է, կարիներտներից, տաբուկ անկյուններից հայրենասիրություն բարոզելն այլեւս ամոթ է, առավել ամոթ է զորակոչից խուսափելը եւ թամաշավորի կեցվածք ընդունելը: Մինչեւ նոր հանդիպում...»:

# Նրանք արժանացել են Արցախի հերոսի բարձրագույն կոչմանը



ԿՐԵՆ ԶՆԱՆՎՅԱՆ, «Եղևիկների» լեգենդար հրամանատար



ՄԵՐԳԵՅ ՇԱՔԱՐՅԱՆ, գնդապետ



ՂԱՎԻԹ ՂԱՋԱՐՅԱՆ, փոխգնդապետ



ՅՈՒՐԱ ԱՆԱՎԵՐՅԱՆ, ավագ սերժանտ



ԷՂԳԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ, սերժանտ



ՂԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ, շարքային



Վարչապետ Լիկոլ Փաշինյանը մարտակոչով է դիմել վերջին մեկ տարում զորացրված մեր զինվորներին

«Գիտեք, որ Հայաստանում հիմա ռազմական դրություն է հայտարարված և հիմա մարդիկ կանչվում են զորակոչի, զորահավաքային խնդիր են լուծում: Խնդիրն այն է, որ մեր օրենսդրությամբ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունն ավարտածները, այսինքն՝ նրանք, ովքեր վերջին մեկ տարում են զորացրվել, իրենք ենթակա չեն զորակոչի: Եվ խնդիրն այն է, որ այսօր հայրենիքն ունի այդ մարդկանց կարիքը: Տղերք, հայրենիքն այսօր ունի ձեր կարիքը», – ասաց Լիկոլ Փաշինյանը:

Նա նշեց, որ արդեն ասվել է՝ սա նոր Սարդարապատ է, սա միայն Ղարաբաղի հարցը չէ, սա հայոց ցեղասպանությունը շարունակելու քաղաքականությունն է, և այսօր պետք է ժողովրդին պաշտպանել ցեղասպանությունից:

«Ես ուզում եմ հիմա կոչով դիմել, որ վերջին մեկ տարվա ընթացքում բանակից զորացրված մեր տղաներն այս պահից սկսած ներկայանան Կենտրոնական հավաքակալային և զինվորագրվեն Հայոց բանակին, զինվորագրվեն այս նոր Սարդարապատին: Արդեն անհրաժեշտ հանձնարարականները տվել են, իհարկե կա նաև անվտանգության խնդիր, հրապարակային եմ խոսում և հակառակորդը նույնպես տեսնում է դա, իհարկե, դա որոշակի կազմակերպչական աշխատանքներ է պահանջում, բայց այդտեղ կկազմակերպվեն, որ շատ մեծ կուտակումներ չլինեն», – ասաց վարչապետ Լիկոլ Փաշինյանը:

Նա ասաց, որ անկեղծ պետք է լինի, որ չեն կանչում ուղղակի մարտական հերթապահություն կամ ծառայություն իրականացնելու, իրենց հրավիրվում են հայրենիքի համար կենաց ու մահու կոչով տալու: Վարչապետը բոլոր նրանց, ովքեր դեռ պահպանել են իրենց զինվորական հագուստները, կոչ արեց ներկայանալ զինվորական հագուստներով և անհրաժեշտ փաստաթղթերով:

«Քանի որ այս հատվածի համար պետությունը մոբիլիզացիոն պլան նախատեսած չի եղել, և ես հիմա խնդրում եմ դա կամավոր անել, խնդրում եմ նաև, որ ովքեր ունեն զինվորական հագուստ, ձեռնային բաճկոն, եթե հանկարծ այլ մարդիկ ունեն սաղավարտ, զրահաբաճկոն, նաև այս մարդկանց խնդրում եմ, որ դա որդեկ ձեռով ուղարկեն և կենտրոնացնեն զինվորական կենտրոնական հավաքակալային:

Ինչ խնդիրներ կկատարեք, որտեղ կկատարեք այդ խնդիրները, դա արդեն տեղում կկազմակերպի հրամանատարությունը: Ձեզնից էլ որոշակի հրամանատարական օղակներ կծեակվորվեն: Ես տրից ասեմ, խոսքը ոչ թե ուղղակի ծառայության մասին է, այլ կենաց-մահու կոչի մասին: Եվ ես հավատում եմ, որ մեծ իրար հետ կկարողանանք այդ կոչվը տալ և հաղթանակն ապահովել այս պատերազմում Հայաստանի, Արցախի: Տղերք, հոյս եմ դնում ձեզ վրա, սիրում եմ բոլորիդ, հպարտանում եմ բոլորովդ և խոնարհվում եմ բոլորիդ առաջ:

Եկեք զինվորական հագուստներով, եթե չունեք՝ կապահովվեք: Ով պատահաբար ունի սաղավարտ, զրահաբաճկոն, տաք վերարկուներ, և այլն, որովհետև սա միջոցառումն է մեզ չի մտնում, իսկ եթե ուրիշ մարդիկ ունեն, խնդրում եմ ուղղակի տանել-թողնել կենտրոնական հավաքակալայինում»: //

## Աշխարհի խոշոր տերությունները և միջազգային կազմակերպությունները կոչ են անում դադարեցնել ռազմական գործողությունները և առանց նախապայմանների վերսկսել բանակցությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ

## Պուտինը, Թրամփը և Մակրոնը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ համատեղ հայտարարություն են արել

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը համատեղ հայտարարությամբ են հանդես եկել Լեռնային Ղարաբաղի հարցով, հայտնում է Կրեմլի կայքը:

«Պուտինը, Մակրոնը և Թրամփը կոչ են արել անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում: Նախագահները Հայաստանին և Ադրբեյջանին կոչ են արել առանց նախապայմանների վերսկսել Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունները», – ասված է հայտարարության մեջ: //



## ԵԱՀԿ ՄԽ-ն կոչ է արել անհապաղ մարդասիրական հրադադար կնքել հակամարտության գոտուց զոհերի դիերի հեռացման համար

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ԼՂ հակամարտության կողմերին կոչ են արել անհապաղ մարդասիրական զինադադար կնքել, որպեսզի հակամարտության գոտուց դուրս բերվեն զոհերի դիերը: Այս մասին ասվում է համանախագահներ Իգոր Պոպովի (ՌԴ), Ստեֆան Վիկտորի (Ֆրանսիա) և Էնդրյու Շոֆերի (ԱՄՆ) համատեղ հայտարարությունում:

«Համանախագահները վճռական կոչ են անում, մարդասիրական նկատառումներից ելնելով, անհապաղ դադարեցնել կրակը, որպեսզի հնարավոր լինի ԵԱՀԿ-ի և ԿԽՄԿ-ի համակարգմամբ ապահովել զոհված զինծառայողների դիերի դուրս բերումը», – ասված է հայտարարությունում:

Բացի այդ, համանախագահներն ընդգծել են, որ արտաքին կողմերի մասնակցությունը բռնության եսկալացիային չի օգնում արձանում տարածաշրջանում կայուն խա-

ղաղության հաստատման ուղղված ջանքերը: Նրանք հակամարտող կողմերին եւս մեկ անգամ կոչ են արել անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և առանց նախապայմանների վերակնքել առարկայական բանակցությունները:

«Համանախագահները վճռականորեն դատապարտում են ԼՂ հակամարտության գոտում շարունակվող բռնությունը, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեյջանի տարածքներում շփման գծից հեռու գտնվող քաղաքացիական օբյեկտներին ուղղված հարձակումները և մտահոգություն են հայտնում խաղաղ բնակչության շրջանում զոհերի թվի աճի առկայությամբ: Քաղաքացիական անձանց նկատմամբ հարձակումները կամ սպառնալիքներն անընդունելի են ցանկացած պարագայում: Համանախագահները կոչ են անում կողմերին լիարժեք հետևել իրենց միջազ-



գային պարտավորություններին, որոնք վերաբերում են քաղաքացիական բնակչության պաշտպանությանը», – ասված է հայտարարությունում: //

# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

## Սիրելի ուսուցիչներ

Հոկտեմբերի 5-ը մեզանում դարձել է ոչ միայն ուսուցչի գնահատանքի եւ մեծարման, այլեւ նախորդ տարվա համեմատությամբ կրթության բնագավառում ձեռքբերումների եւ առաջընթացի ամրագրման օր:

Շնորհավորելով ձեր մասնագիտական տունը՝ մեզ համար ճակատագրական այս օրերին հատկապես ցանկանում են իշխանության տարածքային մարմինների եւ մարզի բնակչության անուկից երախտագիտություն հայտնել ձեզ հայ զինվորի դաստիարակության, նրա մեջ սերմանած հայրենասիրական ոգու համար, մանավանդ որ, այսօր անօրինակ հերոսություն ցուցաբերած մարտիկներից շատերը ընդամենը մի քանի ամիս առաջ են վեր կացել դպրոցական ստարակից: Այն ոգին, պայքարի ուժը, հաղթանակի հավատը, որ ունեն մեր այսօրվա հերոսները՝ զինվորից մինչեւ հրամանատարներ, կամավորականներից մինչեւ պահեստագործայիններ, առավելապես

հենց ձեր նվիրումի շնորհիվ է:

Գիտեմ՝ շատերիդ հարազատներն այժմ սահմանին են, գիտեմ, որ անհանգիստ եք նաեւ յուրաքանչյուր արդեն նախկին աշակերտի, գործընկերների համար, բայց ցանկանում եմ, որ ամեն օր շարունակեք դասարան մտնել նույնքան մեծ պատասխանատվությամբ՝ չմոռանալով, որ անչափ կարեւոր է ամուր թիկունքը, իսկ այն առավել կարող է ամրանալ այսօրվա որակյալ կրթությամբ, եւ այս ճակատում կոչվել գրագետ, հայրենասեր, հայեցի ոգով մեծացող սերունդ ունենալու համար է, ինչը պակաս կարեւոր չէ մեր ընդհանուր պայքարի համատեքստում:

Հենց դպրոցում ստացած կրթության ու դաստիարակության, ձեր աշխատանքի, փոխանցած արժեքահամակարգի արդյունքում է, որ հետայսու եւս պետք է հաղթանակ տանի ոչ միայն զինվորը, այլեւ գիտնականը, արվեստագետը, բժիշկն ու արհեստավորը:

Եվս մի կարեւոր ճակատի մասին,



որում պարտավոր եմ հարթել՝ այս օրերին համավարակը կրկին մտահոգիչ թվեր է հրամցնում մեզ, ուստի խնդրում եմ բոլորիդ՝ չմոռանալ նաեւ այս մասին: Դուք մեծ հեղինակություն ունեք հանրության մեջ ու կարող եք ուսուցանել, զգոնության կոչ անել ոչ միայն ձեր աշակերտներին: Պահպանեք հակահամաճարակային կանոնները ուսումնական գործընթացում, պահանջեք, հետեւեք,

որ աշակերտները, նրանց ծնողները, ձեր գործընկերներն ու շրջապատը եւս չմոռանան այդ մասին: Դա մեծ օգնություն կլինի մեր պետությանը:

Կրկին շնորհավորում եմ ձեզ Ուսուցչի օրվա առթիվ եւ ամենաջերմ բարեմաղթանքներս հղում բոլորիդ՝ օր առաջ՝ խաղաղություն Չայոց երկրում, անհոգ ուսումնական առօրյա՝ մեր կրթօջախներում: //

## Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը՝ «Սյունյաց երկրին»՝ ծննդյան 17-րդ տարեդարձի կապակցությամբ



### Հարգելի պարոն Ալեքսանյան

Շնորհավորում եմ ձեզ, ինչպես եւ «Սյունյաց երկրի» ամբողջ խմբագրակազմին, նաեւ թերթի ընթերցողներին ու Syuniacyerkir.am կայքի հետետողներին՝ պարբերականի ծննդյան 17-րդ տարեդարձի կապակցությամբ:

Այս օրերին բնորոշ բազմազանության եւ ծանրաբեռնվածության մեջ պարտավորված զգացի ժամանակ գտնել եւ շնորհավորանքի խոսք ստել «Սյունյաց երկրի» ծննդյան օրվա կապակցությամբ:

Պիտի խոստովանել, որ հարգանքի ու գնահատանքի արժանի ճանապարհ է անցել լրատվամիջոցն անցած երկարուձիգ տարիների ընթացքում:

Պարբերականին միշտ էլ բնորոշ են եղել սկզբունքայնությունը, լրագրողական վարպետությունը, խոսքի բարձր մշակույթը եւ ճշգրտությունը, սյունիքյան խնդիրների մեջ խորանալու եւ լուծման ուղիներ փնտրելու մատանակները հետետողականությունը:

Ներկայումս էլ, երբ ողջ հայ ժողովուրդը, նաեւ Սյունյաց աշխարհը ոտքի են ելել պաշտպանելու Չայոց սրբազան հողը, չի կարելի չնկատել լրատվամիջոցի հայրենավեր եւ ողջամիտ պահվածքը:

Բոլոր ընթերցողներին, հատկապես հանրապետության գիտական շրջանակներին, հիացմունք են պատճառում թերթի բացառիկ համարները, որոնցից յուրաքանչյուրը, կարելի է ասել, հանրագիտարանային եւ գիտական մոտեցումներով հիմնավորված սկզբնաղբյուրային նշանակություն ունի: Պատկերացնում եմ, թե նման համարներ թողարկելու համար ստեղծագործական որքան պրպտուն աշխատանք է պահանջվում:

Այդ ամենի շնորհիվ է, որ «Սյունյաց երկիրը», Syuniacyerkir.am կայքը մեր երկրամասի ամենամեծ ու հեղինակավոր, նաեւ պահանջված հարթակներն են դարձել:

Ուրախ եմ, որ Սյունիքի մարզում մեկուկես տասնամյակից ավելի տարիներ գործում է նման լրատվամիջոց:

Առանց չափազանցության կարելի է արձանագրել՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ ներկայումս «Սյունյաց երկիրը»,

իր սեփական դիմագծով, հաստատուն եւ մնայուն տեղն ունի մարզի հասարակական-բազմաբան ու մշակութային կյանքում:

Շննդյան օրվա հաճելի առիթով թերթի խմբագրակազմին ցանկանում եմ ստեղծագործական նորանոր հաջողություններ, Սյունիքի առջեւ ծառայած հիմնախնդիրների լուծման գործում որդեգրած սրտացավություն (ինչպես նախորդ տարիներին) եւ, իհարկե, ողջամիտ ճշմարտությանը հավատարիմ մնալու հետետողականություն:

Իսկ խոսքի ազատության, բազմակարծության, բոլոր սյունեցիների համար հասանելի ու մատչելի հարթակ լինելու՝ ի սկզբանե նախընտրած հավատամքը, կարծում եմ, այսուհետ եւս պատիվ կբերի ձեր լրատվամիջոցին:

**Շնորհավոր ծնունդ, «Սյունյաց երկիր»:  
ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ  
ՄԱՐԶՊԵՏ**

## Հոկտեմբերի 1-ին «Սյունյաց երկիրը» դարձավ 17 տարեկան. աղոթում ենք հաղթանակի ու հայոց զինվորների համար

2003 թ. հոկտեմբերի 1-ին լույս տեսավ «Սյունյաց երկիր» առաջին համարը:

Պարբերականը ճամփա ելավ ուշագրավ եւ առայսօր արդիաշունչ խմբագրականով՝ «Մերն է այս երկիրը, եւ մենք ենք նրա տերը»:

Այն ժամանակ միայն աղոթում էինք, որ մեր ճանապարհն անկանգ ու լուսահորդ լինի:

Այն ժամանակ չէինք պատկերացնում, որ ճանապարհը դժվար կլինի այսչափ, որ ուղին փշապատ կլինի հաճախ, որ ստիպված կլինենք փորձությունների միջով անցնել, որ մեր խոփը քանիցս դեմ կաննի կորոյի կամ նույնիսկ հսկա քարաքեկորի:

Հետադարձ հայացք ձգելով անցած ճանապարհին, կարող ենք անվերապահորեն փաստել՝ «Սյունյաց երկիրն» արժանապատվորեն է անցել փորձությունների եւ դժվարությունների միջով ու հավատարիմ մնացել իր սրբազան կոչմանը:

Մեր առաքելության գլխավոր ուղղություններից է եղել հայոց ազգային բանակին սատարելը, սահմանին կանգնած զինվորի կողքին կանգնելը՝ նաեւ պարբերաբար այցելելով նրանց, նահատակ զինվորների հիշատակն արթուն պահելը, հերոսական Արցախի ընթացքը լուսաբանելը, Արցախյան գոյամարտի սխրանքների ոգով աճող սերնդին դաստիարակելը:

Եվ դա շատ տրամաբանական է. Սյունիքն

ու Արցախը մեկ մարմին են եղել ու կան Հայկ նահապետի օրերից, դարեր շարունակ նույն ճակատագիրն են ունեցել եւ միասին պաշտպանել հայոց արեւելյան եզերքերը:

Մեր խմբագրակազմի ավագ սերնդի ներկայացուցիչները դեռեւս Արցախյան առաջին պատերազմի սյունիքյան տարեգիրներն էին:

2016-ի ապրիլյան օրերին «Սյունյաց երկիրը» նույնպես առաջնագծում էր:

Այսօր էլ՝ մեր ժողովրդի համար դժվարին եւ հերոսական ժամին, հայոց քաջարի զինվորների ու կամավորականների հետ ենք...

«Սյունյաց երկիր» 17-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորում եմ թերթի ու կայքի հազարավոր ընթերցողներին, ովքեր եղել ու մնում են մեր լինելիության, մեր ոգեշնչման զուլալ ակնաղբյուրը:

Շնորհավորում եմ իմ սիրելի գործընկերներին, ովքեր նվիրումով, մարդկային ու բազմաբազմակցական վեհ հատկանիշներով, պրոֆեսիոնալիզմի ամենաբարձր ու անհամեմատելի դրսեւորումներով կատարում են իրենց պարտականությունը, ովքեր իրենց վեհանձնությամբ, անկաշառությամբ պաշտպանում են «Սյունյաց երկիր» որդեգրած համամարդկային արժեքահամակարգը:

Խմբագրության ամբողջ կազմով, մեր գործընկերներով ու մեր բարեկամներով աղոթք ենք բարձացնում առ Աստված՝

հաղթանակի համար, խաղաղության համար: Նաեւ խնդրում ենք Սյունյաց հողից հառնած-ճառագած եւ Չայոց աշխարհը վերստին լուսավորած Սուրբ Հովհան Որոտնեցուն,

Սուրբ Գրիգոր Տաթևացուն, Սուրբ Մովսես Խոտանանցուն՝ բարեխոսել Տիրոջը՝ մեր զինվորների արեւշատության համար:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## Սյունյաց աշխարհի նորոյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանն այս բանաստեղծությամբ է արձագանքել «Սյունյաց երկրի» ծննդյան տարեդարձին

ԽՈՍՔ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սիրտդ անվերջ բզկտել եմ, հոգիդ արել ծվեն-ծվեն, Քո ավետյաց բնօրրանը հազար անգամ դարձավ գեհեն, Հազար դար է՝ քո հավատից գեթ մի կտոր չպակասեց, Կամփոջ առաջ պիտի բոլոր աստվածները լուռ խոնարհվեն...

Դու հավերժի Մեծ ճամփորդն ես՝ խիղճդ՝ անհուն, երազդ՝ ջինջ... Ու փանթ Աստծուն՝ բռնն է էլի քո հայրենյաց սուրբ հողը հին, Անկախության հողմի բերած կսկիծները կվերանան... Մորմոքներդ, դարաբաղյան ափեր գտած, թող մեղմանան...

Հազար-հազար տարիներ են եկել-անցել՝ մնց կկենան, Քո հույզերդ, գրկիդ ու սերը միշտ եղել են ու կման, Եթե նորից, Աստված չանի, արհավիրքներ գան ու գնան՝ Քո դարավոր արմատները ամեն ինչի կդիմանան...

1996թ.



# ԱՅՈՒՆԻՔԸ ՀՐԱԺԵՇՏ Ե ՏԱԼԻՍ ԻՐ ՆԱՅԱՏԱԿ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ

## ԻՄ ԱՆՈՒՄԸ ՀԱՍՄԻԿ Է

Արզումանյան Հասմիկ Սմբատի, 1985թ... Ինձ թվում է՝ սխալ եմ տեսնում: Նորից վերադառնում եմ տողի սկիզբ ու տառերը հաստ առ հաստ կարդում: Ամեն ինչ ճիշտ է՝ Հասմիկ: Ենթացիտակցությունս տղամարդու անունն էր սպասում...

Առաջնագծում գոհվածների ցուցակը ջրի տակ շունչը պահելու վերջին վայրկյանների նման մի բան է՝ անտանելի երկար: Ամեն անունի հետ թթվածինը սկսում է սպառվել: Օդը չի հերիքում:

Հիմա ես բերանս ու բիթս պինդ փակել եմ, ինձ թվում է՝ եթե չլսեմ, կուլ տվածս օդից կխեղդվեմ: Տողերը սեղմվել-մնացել են աչքերիս ու ուղեղիս արանքում, անունները հայրանուններին են խառնվել, թվերը խցկվել են տառերի արանքում:

Եթե Փարիզում ապրեք, Նրան կասեին ժամանակ՝ աշխարհի ամենամեղմ թեյի, ամենանուրբ ծաղկի ու ամենաբերուց կանացի

անունով:

Երկունների, գրոների, մեկերի սարսափեցնող կոմբինացիաների արանքում ամեն նոր անունի հետ առաջին տողն է նորից-անընդհատ մտնում ու մնում:

Տեսնես ի՞նչ էր անում էստեղ, ո՞րն էր իր գործը...

Պատերազմը կնոջ դեմք չունի...

Սուտ է Փաստորեն: Բեյառուս Սվետլանան դա ինձից առաջ ու ինձից լավ գիտեր:

Պատերազմը կարող է նաեւ կնոջ դեմքով լինել եւ այն էլ՝ ցուցակի հենց սկզբում գլխագրի նման:

Փորձում եմ Հասմիկի դեմքը պատկերացնել: 35 տարեկան...

Շնորհակալ սիրո՞ւմ եր... Կսիրեք: Ո՞ր մի կինը շնորհակալ չի սիրում: Ո՞ր մի կինը գոնե մի տեսակի ծաղիկ չի սիրում: Ո՞ր մի կինը չի սիրում... Ո՞վ է ինձից առաջ կարդացել այս անունը...

Վախենում եմ դիմագծեր ու դրվագներ

պատկերացնելուց, սարսափում եմ: Ատում եմ բարձրակրունկները: Հենց նոր: Դրանք հագնելու ամենալավ տարիքը 30-ից հետո է, հատկապես պարեյիս այնքան սիրուն են Նայվում, առավել եւս, եթե կա մեկը, ով կպտտի թեզ, հետո ամուր կպահի մեջքը, որ չսայթաքես: Կանայք միշտ սիրում են հենկել հուսալի ուսի:

Իսկ նա՞: Չարմանալի է՝ չի փախել, չի թաքնվել: Ոչ մի տղամարդու թիկունքում:

Երբեք պատկերացրե՞լ է, որ իր անունը կլինի բոլոր քաջերից առաջ՝ ամենասկզբում:

Հասմիկն այնքան սիրուն անուն է՝ խիզախությունն անասելի փխրուն ու գայթակղիչ դարձնող:

Սիրելիս, ո՞ւր ես: Երբ կրակոցները դադարեն, փոխարենը հնչի Nirvana-ի «All apologies»-ը, ու կանայք Նորից բարձրակրունկներ հագնեն, հայտնվիր (ֆրեզիաներով), հրավիրիր ինձ պարելու, պտտիր՝ ինչքան կարող ես երկար, ես պարել շատ եմ սիրում (եւ դառը



շնորհակալ: Հետո պինդ պահիր, լա՞վ, ես մի քիչ թույլիկ եմ:

Իսկ մինչ այդ՝ իմ անունը Նույնպես Հասմիկ է:

ԱՐՄԻՆԵ ՕԼԵՅԱՆ



## Հանգչիր խաղաղությամբ, հայրենիքի պաշտպան

Հոկտեմբերի 2-ին Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց մարզկենտրոնի բնակիչները վերջին հրաժեշտը տվեցին սեպտեմբերի 29-ին զոհված Շավարշ Մուրադյանին: Երբ սեպտեմբերի 27-ին թշնամին հարձակում սկսեց հայ-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով՝ Մռավի փեշերից մինչև Արաքս, Շավարշը «Արծիվ մահապարտներ» ջոկատի կազմում մեկնեց ճակատ: Ավա՞ր, սեպտեմբերի 29-ին նա խոցվեց թշնամու գնդակից:

Կարճատեղ, բայց իմաստային կենսագրություն է ունեցել: Ծնվել է 1996 թվականին Կապանում, Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Մարտուն Մուրադյանի ընտանիքում: Նախ՝ սովորել է Կապանի թիվ 7, այնուհետև՝ թիվ 3 դպրոցում: Ուսումնառության տարիներին աչքի էր ընկնում դպրոցական առարկայական օլիմպիադաներում, 11-րդ դասարանում շահեց «\$ԼԵՔՍ» մրցույթում եւ ուսումը շարունակեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում: ԱՄ-ից վերադառնալուց եւ դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Հայաստանի Ամերիկյան Համալսարան: 2015 թ. գորակազմեց Հայկական բանակ, իսկ 2016 թ. մասնակցեց Ապրիլյան



քառօրյա պատերազմին: Չորացրվելուց հետո շարունակեց ուսումը, այս տարի պիտի ավարտեր բուհը...

Մարզկենտրոնի Բաղաբուրջի հուշահամալիրում կատարվեց հոգեհանգստյան արարողություն կատարեցին Քաջարանի հոգետոբեկավ Սյունիքի մարզպետարանի գորահավաքային բաժնի պետ Արսեն Գրիգորյանը: Չոհվածի դին զինվորական պատիվներով հանձնվեց մայր հողին:

Հանգչիր խաղաղությամբ, հայրենիքի պաշտպանության համար կամավորագրված զինվոր:

## Կապանը վերջին հրաժեշտը տվեց...

Սեպտեմբերի 30-ը տխրությամբ բացվեց Կապանում: Մարզկենտրոնի բնակիչները վերջին հանգրվան ճանապարհեցին ամսի 27-ից սկսված պատերազմում նահատակված երեք կապանցու՝ Գառնիկ Խլղաթյանին, Սասուն Ներսիսյանին, Արամ Գրիգորյանին: Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Այնուհետև սզակիր բազմությունն ուղղություն վերցրեց դեպի Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ տեղի ունեցավ սզո հանրահավաք: Հրաժեշտի խոսք հնչեցրեց բանասեր Լեոն Մարգարյանը, նահատակ զինվորների կենսագրականները ներկայացրեց Օխտարի միջնակարգ դպրոցի տնօրեն Վարդան Ստեփանյանը:

Արամ Գրիգորյանը ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 5-ին Կապանում: Նախ՝ սո-

վորել է Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում, այնուհետև տեղափոխվել Աճառանի միջնակարգ դպրոց, ավարտելով՝ ընդունվել ՀԱԳՀ Կապանի մասնաճյուղ: 2019 թ. հունվարի 23-ին գորակազմեց պարտադիր զինվորական ծառայության: Նախ ծառայում էր Գյումրիում տեղակայված N զորամասում, ստանալով սերժանտի կոչում, տեղափոխվեց Պաշտպանության բանակի հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամաս: Արամը զոհվեց թշնամու դեմ մղված անհավասար մարտում:

Գառնիկ Խլղաթյանը ծնվել է 2001 թ. հուլիսի 28-ին Կապանում: Հիմնական կրթությունը ստանալուց հետո ընդունվել է Կապանի պետական բժշկական բուհ: 2019 թ. դեկտեմբերին գորակազմվել է ՀՀ զինված ուժեր եւ ծառայում Պաշտպանության բանակի հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասի հետախուզական վաշտում: Չոհվել է 2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ մար-

տական գործողությունների ժամանակ, հակառակորդի անօդաչու թռչող սարքի հարվածից:

Սասուն Ներսիսյանը ծնվել է 2002 թ. մարտի 21-ին Կապանում: Նախ սովորել է թիվ 13 հիմնական դպրոցում, ապա կրթությունը շարունակել Սյունիքի ՄՊԶ-ի «Կապի սարքավորումների մոնտաժում եւ շահագործում» մասնագիտությամբ: 2020 թ. հուլիսին գորակազմվել է ՀՀ զինված ուժեր եւ ծառայության անցել Պաշտպանության բանակի հարավային ուղղությամբ տեղակայված Հադրոթի զորամասում: Անօ-

դաչու թռչող սարքի պայթյունից զոհվել է սեպտեմբերի 27-ին:

Չոհված տղաների դագաղները գերեզման իջեցնելուց առաջ հոգեհանգստյան արարողություն կատարեցին Քաջարանի հոգետոբեկավ տեր Հիրակ քահանա Խանոյանը, Վահանավանքի հոգետոբեկավ տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը: Չոհված տղաները վերջին հանգրվան գտան Ապրիլյան պատերազմի նահատակներ Նորայր Գասպարյանի, Գագիկ Փարսադանյանի, Արմեն Գասպարյանի շիրիմների կողքին:

**ՖՄՄ 3 - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
08.08.2020 թ. թերթի 19 (535) համարում հրապարակված մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետի երկարաձգման մասին  
«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-3) ծրագրի իրականացման գրասենյակը Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անունից տեղեկացնում է Սյունիքի մարզի Կապանի, Քաջարանի, Մեղրիի տարածաշրջաններում գրանցված բոլոր համապատասխան հասարակական կազմակերպություններին, որ թիվ SPPA /ARMENIA/S/2020-3 մրցույթի՝ ֆինանսական Մասնակցային Մոտեցման 3-րդ փուլի (ՖՄՄ 3) իրականացմանն աջակցող հասարակական կազմակերպության ծառայությունների մատուցման համար մրցութային փաթեթների ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվում է մինչև 2020 թ. հոկտեմբերի 13-ը՝ ժամը 18:00 ներառյալ:

Երացուցիչ տեղեկությունների համար գրել ՊՏԱԾ-3 ծրագրի Գնումների մասնագետ/հաշվապահ Մարինա Բաբայանին՝ հետևյալ էլ-փոստի հասցեով. m.babayan@consecord.am.  
Ազգային մրցույթի փաստաթղթերի փաթեթի մասին առավել մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ Հրջակա միջավայրի նախարարության կայքի՝ www.mnp.am «Հայտարարություններ» բաժնում, ինչպես նաև Նույն կայքի ՊՏԱԾ-3 ծրագրի ենթաբաժնի հայտարարությունների բաժնում:

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-3) ծրագիրը մաս է կազմում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական Համագործակցության եւ Չարագման Նախարարության կողմից (BMZ No: 2009.6657.2) մեկնարկած Կովկասյան Նախաձեռնությանը:  
Սույն ծրագիրն իրականացվում է համաձայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված միջկառավարական ֆինանսական համաձայնագրերի, ինչպես նաև KFW բանկի եւ ՀՀ Բնապահպանության նախարարության միջեւ 28.05.2013թ. ստորագրված առանձին Համաձայնագրի հիման վրա:

**Սյունյաց երկիր**  
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԴՐՎԻՉ «ԱՅՈՒՆԻՔՆԵՐ ԱՆՍԻՆԻՆ» ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
☎ (+374 285) 5 25 63  
☎ (+374 91) 45 90 47  
☎ (+374 77) 45 90 47  
✉ syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհանդիսանալ: Կյուրերը ներկայացնել մեքենագիր վիճակում:  
«ԳՈՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուրերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Հոլմը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Թ Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուրեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 07.10.2020թ.: